ՀՏԴ 941(479.243) *Պատմություն*

Նելլի Բաղդասարյան,
պ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ պատմության ամբիոն
e-mail: nelliohanjanyan@yandex.ru

ԱՐՏԱՔԻՆ ՀԱԿԱԿՇՌՌՈՒՄՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՍՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼՈՒՄ /2016 Թ. ԱՊՐԻԼ-ՀՈՒԼԻՍ/

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրման քննակվող փուլում տարածաշրջանային հետաքրքրություններով պայմանավորված արձանագրվեցին հակակշռումների վերաթարմացման դրսևորումներ.ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների ներսում՝ եռաչափ տեսքով և տարածաշրջանի խաղացողների ձևաչափով: Մասնավորապես հոդվածում քննարկվել են հակամարտության հետ կապված ռուս-ամերիկյան, ռուս-ֆրանսիական, ռուս-թուրքական, ռուս-գերմանական հակակշռումների դրսևորումները: Հատկանշական է, որ արտաքին հակակշռումների առանցքը Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականությունն էր, և դերակատարությամբ շահագրգիռ երկրների գործունեությունը մեծապես հարաբերվում էր այդ քաղաքականության հետ:

Բանալի բառեր՝ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն, հակակշռումներ, ապրիլյան քառօրյա պատերազմ, ԵԱՀԿ Մինսկի խումբ, Ադրբեջան, Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Թուրքիա, Գերմանիա

Нелли Багдасарян,
к.и.н., доцент, кафедра истории АрГУ
e-mail: nelliohanjanyan@yandex.ru

ПРОЯВЛЕНИЕ ВНЕШНИХ ПРОТИВОВЕСОВ НА НОВОМ ЭТАПЕ ОБОСТРЕНИЯ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА /АПРЕЛЬ-ИЮЛЬ 2016 Г./

Минская группа ОБСЕ, Азербайджан, Россия, США, Франция, Турция, Германия.
На рассматриваемом этапе обострения азербайджано-карабахского конфликта были выделены проявления обновлений противовесов, обусловленные региональными интересами стран-сопредседателей Минской группы ОБСЕ в трехмерном виде и в формате игроков региона. В статье, в частности, рассматриваются проявления русско-армянских, русско-французских, русско-турецких, русско-германских противовесов. Следует отметить, что ось внешних противовесов являлась южно-кавказской политикой России и по своей роли деятельность заинтересованных стран в значительной степени соотносилась с данной политикой.

Ключевые слова: азербайджано-карабахский конфликт, противовесы, четырехдневная апрельская война,

Nelly E.Baghdasaryan,
Doctor in History, Docent, the Chair of History, Artsakh State University
e-mail: nelliohanjanyan@yandex.ru

THE MANIFESTATION OF EXTERNAL BALANCES AT THE NEW STAGE OF ESCALATION OF THE AZERBAIJANI-KARABAKH CONFLICT/APRIL-JULY 2016/

At this stage of the Azerbaijani-Karabakh conflict deterioration manifestations of balances' updates were highlighted related to the regional interests of the countries co-chairing the OSCE Minsk group in three dimensions and in the format of region actors. In the article, in particular, manifestations of the Russian-Armenian, Russian-French, Russian-Turkish, Russian-German balances are considered. It should be noted that the axis of the external balances was the South Caucasian policy of Russia and the activities of the countries concerned were largely aligned with this policy.

Key words: the Azerbaijani-Karabakh conflict, the balances, the four-day April war, the OSCE Minsk group, Azerbaijan, Russia, USA, France, Turkey, Germany.

1994 թ. հրադադարի կնքումից հետո ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ընթացքում սրման փուլերը շարունակվում են. պատերազմը ըստ ադրբեջանական կողմի, անավարտ է՝ գրանցած արդյունքների իմաստով:

2016 թ. ապրիլին սրված հակամարտությունը /ապրիլի 1-ի լույս 2-ի գիշեր -ապրիլի 5-ի օրվա երկրորդ կեսին հանդարտված ռազմական գործողություններ/ Ադրբեջանի կողմից խնդիրը վերաթարմացնելու փորձ էր: Դիտարկվող խնդրի ժամանակագրությունը հետևյալն է. 2016 թ. ապրիլի 5-ին ձեռք բերվեց բանավոր պայմանավորվածություն ռազմագործողությունները դադարեցնելու նպատակով, 2016 թ. ապրիլի 7-ին Ստեփանակերտ ժամանեցին ԵԱՀԿ ՄԽ համանախագահները[1], 2016թ. մայիսի 16-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Վիեննայում մասնակցեցին ԼՂ հակամարտության կարգավորման առիթով հրավիրված քննարկմանը, որին մասնակցում էին նաև ԵԱՀԿ ՄԽ համանախագահող

[1] Բակո Սահակյանը ԵԱՀԿ ՄԽ-ին. Բանակը կասեցնում և կասեցնելու է ցանկացած ոտնձգություն, 07.04.2016 (http://news.am/arm/news/321160.html)

երկրների արտգործնախարարները, դեսպանները, ինչպես նաև ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչը: Համանախագահող երկրների ներկայացուցիչները պնդեցին 1994թ. զինադադարի պահպանման անհրաժեշտությունը: Բացի այդ համաձայնություն ձեռք բերվեց մշտադիտարկման և միջադեպերի հետաքննության մեխանիզմների ներդրման, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի կարողությունների ավելացման և հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի հնարավոր վերսկսման ուղղությամբ[1]: Վիեննայի հանդիպումը վերջ դրեց ապրիլյան քառօրյա պատերազմից հետո 1994 թ. հրադադարից հեռանալու և պատերազմից հետո ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունը հիմք ընդունելու ադրբեջանական կողմի ակնարկներին:

Մի կողմ թողնելով ռազմագործողության մանրամասները՝ անդրադառնանք հակամարտության սրման կամ թեժացման քննակվող փուլում տարածաշրջանային հետաքրքրություններով պայմանավորված հակակշռումների վերաթարմացմանը: Հակակշռման այդ գործոններն արտահայտվեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների ներսում՝ եռաչափ տեսքով և տարածաշրջանի խաղացողների ձևաչափով: Հատկանշական է, որ արտաքին հակակշռումների առանցքը Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականությունն էր, և վերոնշյալ շահագրգիռ դերակատարների գործունեությունը մեծապես հարաբերվում էր այդ քաղաքականության հետ:

Ռուս-ամերիկյան հակակշռումը հակամարտության սրման նոր փուլում տրամաբանական շարունակությունն է այն հակադարձ մեխանիզմների, որոնք առկա էին երկու գերտերությունների միջև ինչպես աշխարհաքաղաքական բոլոր գործընթացներում, այնպես էլ հարավկովկասյան տարածաշրջանում: Անժխտելի է, որ այդ գործողություններով հանդերձ՝ Ռուսաստանին է պատկանում միջնորդական առաքելության մեջ շարժիչ ուժը կամ մեռյալ կետից իրողությունները թարմացնելու դերը: Ի լրումն նշվածի՝ 2016 թ. ապրիլի 9-ին արտաքին և պաշտպանական քաղաքականության կոմիտեի առջև ելույթ ունենալու ժամանակ Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերատեսչության ղեկավար Սերգեյ Լավրովը մասնավորապես նշել էր, որ ռուսական արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի հիմքը հեռանկարում պետք է հենված լինի առաջատար ուժային կենտրոնների փոխգործակցության հիմքի վրա համատեղ լուծելու գլոբալ պրոբլեմները[2]: Ասվածի ենթատեքստում պետք է դիտարկել նաև հետևյալը. ետապրիլյան շրջանի ադրբեջանա-ղարաբաղյան չգաղտնազերծված դիվանագիտության պայմաններում ռուսական արտաքին քաղաքականության հայեցակարգի թարմացված խմբագրման մեջ /նախատեսվում է հաստատել 2016 թ. ընթացքում/ հակամարտության մասին նշվում է՝ այլընտրանքի հնարավորություն չի դիտարկվում Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ–պետությունների հետևողական ազդեցությանը հաշվի առնելով այն սկզբունքները, որոնք առկա են Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարություններում[3]:

Վերը նշվածի կողքին, եթե ուշադրություն դարձնենք ՌԴ արտաքին քաղաքականության գերատեսչության ղեկավարի ադրբեջանա-ղարաբաղյան հիմնախնդրին վերաբերող պաշտոնական հայտարարություններին, պետք է արձանագրենք գործընթացում սեփական դերը շեշտելու ոճը: Մասնավորապես Ս. Լավրովի պաշտոնական հարցազրույցներում հստակ ընդգծվում է այդ հանգամանքը. «**Մենք գտնվում ենք** կողմերի մեջ մշտական կապի մեջ: Նախագահ Պուտինը **անձամբ է** ստանձնել այդ գործը, երբ տեղի է ունեցել բռնկումը: **Ես անձամբ** մի քանի անգամ հեռախոսազրույց եմ ունեցել իմ կոլեգաների հետ : **Մենք խոսել ենք** ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի հետ, քանի որ Ռուսաստանը, ԱՄՆ և Ֆրանսիան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետություններ են, որոնք զբաղվում են լեռնային-ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ: Մենք այդ հարցը քննարկել ենք Մոսկվայում Ժ.Մ.Էյրոյի հետ, Ֆրանսիայի արտգործնախարարի հետ, ով այդ «եռյակի» մի մասն է…»[4]: Եթե հաշվի առնենք այն հստակ իրողությունը, որ Ս. Լավրովի տարածաշրջանային ազդեցության կամ աշխարհաքաղաքական նշանակության ելույթների ետնախորքում նաև ամերիկյան արտաքին քաղաքականությանը հակազդելն է, ապա այս ելույթը ևս բացառություն չի կարելի համարել, այն պարզ պատճառով, որ ռուսական արտաքին

[1] Վիեննայում համաձայնել են քայլեր ձեռնարկել միջադեպերի հետաքննության մեխանիզմի ներդրման ուղղությամբ, 17. 05.2016, (http://www.armenpress.am/arm/news/847441/viennayum-hamadzaynel-en-qayler-dzernarkel-mijadeperi-hetaqnnutyan.html)

[2] Лавров анонсировал новую концепцию внешней политики России, 9 апреля 2016 (https://lenta.ru/news/2016/04/09/national/)Նույն տեղում տե՛ս նաև. դեռևս 2015 թ. օգոստոսին Ս. Լավրովը հայտարարել էր, որ աշխարհի ճակատագիրը չի կարող որոշել մեկ պետություն կամ պետությունների նեղ խումբ: Սա առավել շատ ուղղված էր ԱՄՆ-ի ազգային անվտանգության ստրատեգիային/ 2015 թ. փետրվար/, որտեղ ըստ Ս.Լավրովի գլխավոր շեշտը դրված էր այն հանգամանքի վրա, որ Վաշինգտոնը պետք է կառավարի «բոլորին և ամենուր»:

[3] Об основных итогах деятельности Министерства иностранных дел Российской Федерации в 2015 году и задачах на среднесрочную перспективу 28.04.16 (http://www.mid.ru/web/guest/activity/state_programs/-/asset_publisher/0v2mp2BUeZnQ/content/id/2258685)

[4] Интервью Министра иностранных дел России С. В.Лаврова МИА «Россия сегодня», Москва, 4 мая 2016 года (http://www.mid.ru/web/guest/meropriyatiya_s_uchastiem_ministra//asset_publisher/xK1BhB2bUjd3/content/id/2267661) Գրեթե նման շեշտադրումներով հարցազրույց ապրիլյան պատերազմից հետո ներկայացրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Իգոր Պոպովը, որի խոսքերով. «Կողմերի հետ համագործակցությունը կարգավորելու այդ ձգձգված կոնֆլիկտի լուծումը դասվում է Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական անժխտելի առաջնահերթություններին: …. Ինչպես գիտեք, հենց Ռուսաստանն է խաղացել կարևոր դեր լայնածավալ ռազմական գործողությունների դադարեցման գործում ս.թ. ապրիլի սկզբին Մոսկվա հրավիրելով Հայաստանի և Ադրբեջանի գլխավոր շտաբերի պետերին» տե՛ս Игорь Попов: Есть перспектива достижения рамочной договоренности по нагорно-карабахскому урегулированию 7 июня 2016 (http://www.interfax.ru/interview/512274/)

քաղաքականության հակադրումը քննարկվող հակամարտության հարցում խիստ թույլ է արտահայտված եռանախագահության ֆրանսիական ուղղությամբ:

ԱՄՆ–ը իր հերթին, որևէ կերպ չցանկանալով հետ մնալ տարածաշրջանային զարգացումներից, մի շարք քայլեր ձեռնարկեց. ապրիլի 2-5-ը ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերին հակամարտությունը զսպելու կոչով իր հեռախոսազրույցներում դիմել էր Ադրբեջանի և Հայաստանի նախագահներին: Իր հերթին ԱՄՆ Պետդեպարտամենտի տեղեկատվության ծառայության պետ Ջոն Կիրբին, մեկնաբանելով հակամարտության շուրջ ծավալված գործընթացը Վիեննայում սկսված հանդիպման մասին, մասնավորապես նշել էր, որ ԱՄՆ-ը միշտ էլ հետաքրքրված է եղել լեռնային-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման լուծման ճանապարհներով, ռազմական գործողությունների դադարեցումը «քաղաքական երկխոսության ճանապարհով»[1]: Հուլիսին կայացած հեռախոսազրույցում ընդգծելով լարվածության թուլացումը՝ Ջ. Քերին շեշտել էր ԱՄՆ պատրաստակամությունը Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում **լուրջ բանակցություններ** կազմակերպելու հիմնախնդրն համապարփակ կարգավորման նպատակով[2]:

Հարկ է նշել, որ ապրիլյան պատերազմին արձագանքեցին նաև Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան Ջոն Էվանսը, և Վրաստանում ու Բելառուսում՝ ԱՄՆ նախկին դեսպան Քենեթ Յալովիցը: Ջոն Էվանսն հատկապես ընդգծեց, որ ապրիլյան պատերազմը մեծ հարված հասցրեց **Մինսկի խմբի համանախագահների դիվանագիտական աշխատանքին**: Իր հերթին էլ Յալովիցի հիմնական շեշտադրումը հետևյալն էր. ապրիլյան պատերազմը լուրջ վտանգ էր հանդիսանում ոչ միայն Հարավային Կովկասի, այլև տարածաշրջանում գլոբալ խաղացողների համար. «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմը կարող է շատ վտանգավոր լինել, կարող է իր մեջ ներքաշել Թուրքիան, Ռուսաստանը եւ նույնիսկ Իրանը: Դա կնշանակի, որ **ՆԱՏՕ-ի անդամ պետությունը փաստորեն պատերազմի մեջ կհայտնվեր Ռուսաստանի հետ**»[3]: Ասվածի դիվանագիտական ենթատեքստում Յալովիցը մատնանշում էր գլոբալ կոնֆլիկտային իրողությունների վտանգ՝ թերևս հաշվի առնելով նաև սիրիական ճգնաժամը:

Հետապրիլյան քաղաքական իրողություններին հատուկ էր նաև այն, որ ԱՄՆ-ը իր դիրքորոշումն արտահայտեց ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի բերանով, որը հայտարարել էր, որ Վարշավայի խորհրդաժողովի լիազումար կոմյունիկեում կետ է մտցվել ղարաբաղյան կարգավորման մասին. «…Մենք կողմերին կոչ ենք անում թուլացնել լարվածությունը և զերծ մնալ բռնությունից ինչպես նաև շարունակել կոնֆլիկտի խաղաղ կարգավորման որոնումները բանակցությունների ճանապարհով»[4]: Հատկանշական է, որ մինչապրիլյան շրջանում ՆԱՏՕ-ի՝ դիրքորոշումը հիմնախնդրի նկատմամբ տարածքային ամբողջականության սկզբունքի հիշատակումից այն կողմ չէր անցնում: Սա նաև Ռուսաստանի կողմից կարգավորման միայնակ նախաձեռնություններին հակադարձող հայտարարություն էր , և ի դեմս ՆԱՏՕ-ի այստեղ պետք է տեսնել ԱՄՆ-ի կողմից հակակշիռ գործողություն:

Հատկանշական է, որ ռուս-ամերիկյան հակակշռման մեխանիզմների տրամաբանական հանգրվանը հունիսի 20-ին Սանկտ Պետերբուգում կայացած Սարգսյան-Պուտին-Ալիև հանդիպումն էր: Ի տարբերություն Վիեննայի գործընթացի՝ հանդիպման արդյունքները համանախագահներին ներկայացվեց միայն հանդիպումից հետո: Սա ռուսական գործելաոճի առանձնահատկություններից է, երբ հերթական անգամ համանախագահող պետություններին ցույց տրվեց, որ միջնորդական գործունեության մեջ ծանրության կենտրոնն, այնուամենայնիվ Ռուսաստանում է: Ադրբեջա-ղարաբաղյան հակամարտության օրինակով շեշտվեց Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցությունը: Սանկտպետերբուրգյան հանդիպումը հերթական ազդակն էր համանախագահող երկրներին՝ Ռուսաստանի ակնհայտ ծանրակշռմամբ: Ի լրումն ասվածի՝ եռանախագահողներից երկուսի մասնակցությունը կարգավորման գործընթացում ռուսական ակտիվ քաղաքականության ֆոնին թույլ տեսք է ստանում: Հակամարտության սրման նոր փուլում ռուսական քաղաքականությունը պայմանավորող գործոններն էին.

- Սանկտպետերբուրգյան գործընթացի դեկլարատիվ բնույթը, չպարտադրող տարրերը ռուսական կողմի համար գործընթացը վերահսկելու և Հայաստանին ու Ադրբեջանին իր տեսանելիության դաշտում պահելու միջոց էր,
- Ռուսաստանի քաղաքականությունը ՆԱՏՕ-ին հակադրվելու, ինչպես նաև Մերձավոր Արևելք, Կենտրոնական և Հարավ-Արևելյան Ասիա համաչափ ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու միջոց է:

Մյուս կողմից՝ հետապրիլյան ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության շուրջ պտտվող քաղաքական զարգացումներում ամերիկյան չափավոր արտահայտված հակակշռման մեխանիզմների գլխավոր պատճառները պայմանավորված էին.

---

[1] Госдеп: режим прекращения огня в Нагорном Карабахе не соблюдается, 16 мая 2016 (http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/3286540)

[2] Вашингтон призвал Армению и Азербайджан выполнять мирные обязательства, 1 июля 2016 (http://www.interfax.ru/world/516356)

[3] ԼՂ բանակցությունները պետք է կենտրոնացնել ոչ այնքան տարածքների, որքան մարդկանց վրա. Ջոն Էվանս, 06/16/2016 (http://www.pastinfo.am/hy/news/2016/06/16/%D4%BC%D5%82%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/413843/)

[4] Айрумян Н., НАТО резко изменило отношение к карабахской проблеме, 8 Июля, 2016, (http://www.lragir.am/index.php/rus/0/comments/view/49603)

- սիրիական ճգնաժամում նրա գործուն ներգրավվածությամբ, հետևաբար նաև այդ տարածաշրջանում ռուս-ամերիկյան հակակշռման լիցքերի պարպմամբ,
- ինչպես նաև ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում դրական զարգացումների բացակայության պատասխանատվության ողջ ծանրությունը Ռուսաստանի վրա դնելու նկատառումներով:
- ԱՄՆ–ի նախագահական ընտրությունների շեմին գտնվելու հանգամանքով:

Ռուս-ֆրանսիական թույլ արտահայտված հակակշռման մեխանիզմներ: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող պետությունների ներսում հակակշռման մեխանիզմներ արտահայտվեցին Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Պետական մակարդակով հանդիպումների ընթացքում Ֆրանսիան և Ռուսաստանը որպես համագործակցության եզր, նշում են նաև ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորումը[1]: Հատկանշենք, որ երևույթի ակնհայտ բացակայություն կա հատկապես ռուս-ֆրանսիական նախաձեռնություններում՝ ուղղված ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Ֆրանսիական պաշտոնական տեսակետը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրումը չէր կապում տարածաշրջանային արտաքին գործոնների հետ: Հարկ է նշել, որ ապրիլի 2-ին և 5-ին Ֆրանսիան կոչ էր անում չուշացնել բանակցությունները խաղաղ լուծումը գտնելու համար[2]: Ֆրանսիայի մասնակցությունը Վիեննայի մայիսի 16-ի «3+2» հանդիպմանը առիթ էր ֆրանսիական կողմի համար հերթական անգամ վերահաստատելու իր դիրքորոշումը հիմնախնդրի նկատմամբ, մասնավորապես Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքէջում նշվում էր, որ Ֆրանսիան ողջունում է խորհրդակցության արդյունքներր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում, ինչր նպաստում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսությանր՝ ապրիլի 2-5-ր բախումներից հետո[3]:Հուլիսի 5-ի հաղորդագրության մեջ էլ Ֆրանսիան հայտարարել էր, որ պատրաստ է կողմերի հերթական հանդիպումն անցկացնելու Ֆրանսիայում: Սա դիտվում է համանախագահող երկրի պարտականություն և նախաձեռնության դրսևորում:

Ի տարբերություն պաշտոնական մակարդակով արված հայտարարությունների՝ ոչ պաշտոնական մակարդակով ֆրանսիական կողմը հակամարտության թեժացումը կապեց 2015թ. նոյեմբերին ռուս-թուրքական վատթարացած հարաբերությունների հետ այն վարկածով, թե Ռուսաստանը սեփական տնտեսական շահերի համար հրահրում է հակամարտության թեժացումը՝ հստակ առճակատման գնալով Թուրքիայի հետ: France24 հեռուստալիքի եթերում Փարիզի Science Po համալսարանի քաղաքական վերլուծաբան Թոռնիկե Գեորգաձեն ընդգծում էր, որ Ադրբեջանը Եվրամիության էներգամատակարարման հարցում այլընտրանք է Ռուսաստանին, և եթե Ռուսաստանն ապակայունացնում է տարածաշրջանը, ապա Եվրոպան ստիպված կլինի հրաժարվել այդ էներգետիկ միջանցքից: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա վերջինս փորձում է Ադրբեջանի օգտին արված քայլերով նրան հեռացնել Մոսկվայից[4]:

Ֆրանսիան՝ որպես հարավկովկասյան հակամարտությունների միջնորդ և տարածաշրջանային քաղաքականության մեջ ներգրավված դերակատար, ԵՄ անդամ պետություններից առավել վաղ է հանդես եկել հակամարտության կարգավորման նախաձեռնությամբ (դեռ 1990-ականների սկզբներից), և առաջին լուրջ օրինակը Ֆրանսիայի մասնակցությունն էր ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: Այս դերակատարության տակ ընկալվում է, որ.

- Փարիզը ունի հատուկ դերը եվրոպական (և համաշխարհային) քաղաքականության մեջ,
- Ֆրանսիայի մասնակցությունը ԵԱՀԿ ՄԽ-ում հիմնականում ընկալվում էր ոչ միայն «անձնապես» Ֆրանսիայի մասնակցություն է, այլ նաև երկրի, որն էականորեն ներկայացնում է Եվրամիության դիրքորոշումը,
- Ֆրանսիան փորձում է մարդասիրական գործելակերպով Եվրոպայի հարավ-արևելյան դարպասը հասցնել Հարավային Կովկաս, այս դեպքում, ադրբեջանա-ղարաբաղյան կոնֆլիկտով հետաքրքրվածությունը նրան տալիս է այդ հնարավորությունը,
- ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ի հակադրություն ԱՄՆ-ի քաղաքականության, որը ՆԱՏՕ-ի դիրքորոշումն է ներկայացնում/ կամ հակառակը/, Ֆրանսիան ներկայացնում է Եվրամիության դիրքորոշումը:

Ռուս-թուրքական հակակշռման մեխանիզմներ: Ապրիլյան հետպատերազմյան դիվանագիտության մեջ որպես հակակշռման մեխանիզմ ակնհայտ էր ռուս-թուրքական հակադրումը: Ըստ թուրքական վերլուծական կենտրոնների տեղեկատվության քառօրյա պատերազմը դիտարկվում էր որպես «Ադրբեջանի հաղթանակ», «Հայաստանի դիվանագիտական մեկուսացում»: Հատկանշական է, որ 2015 թ. նոյեմբերից սկսված ռուս-թուրքական հարաբերությունների սառեցման ֆոնին Ռուսաստանը պետք է հակադրվեր Թուրքիայի պահվածքին՝

[1] Интервью Посла России во Франции А.К. Орлова информагентству «ТАСС», 29 июня 2016 года, (http://www.mid.ru/sovesanie-poslov-i-postoannyh-predstavitelej-rossijskoj-federacii-30-iuna-1-iula-2016-g./-/asset_publisher/sznBmO7t6LBS/content/id/2341903)

[2] Arménie / Azerbaïdjan - Réunion "3+2" sur le Haut-Karabagh (Vienne, 16 mai 2016) (http://www.diplomatie.gouv.fr/fr/politique-etrangere-de-la-france/defense-et-securite/crises-et-conflits/haut-karabagh/evenements/article/armenie-azerbaidjan-reunion-3-2-sur-le-haut-karabagh-16-05-16)

[3] Conflit du Haut-Karabakh – Appel au respect du cessez-le-feu (2 avril 2016) (http://www.diplomatie.gouv.fr/fr/politique-etrangere-de-la-france/defense-et-securite/crises-et-conflits/haut-karabagh)

[4] Ղարաբաղյան բախումների հետևում կանգնած են Ռուսաստանն ու Թուրքիան. France24, Ապրիլ 30 2016, (http://168.am/2016/04/30/630849.html)

սահմանափակելու վերջինիս դրսևորման հնարավորությունները Հարավային Կովկասում[1]: Ռուս-թուրքական հակասությունների լարման ֆոնին ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ պետության Թուրքիայի՝ շահախնդիր պահվածքին ի հակակշիռ Ռուսաստանը պետք է հանդես գար սանձահարողի կամ խաղաքարտերի տիրոջ առաքելությամբ:

Հատկանշական է, որ ի հակակշիռ Ռուսաստանի՝ հակամարտության սրման օրերին որոշակի զգոնություն պահպանած Թուրքիան վարչապետի՝ / Ահմեդ Դավութօղլուի/ մակարդակով հայտարարում էր, որ Անկարան Ադրբեջանի դեմ ուղղված յուրաքանչյուր սպառնալիք համարում է իրենը: Նրա կարծիքով՝ Թուրքիան համարվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, իսկ Ռուսաստանը դեմ է հանդես գալիս Անկարայի համանախագահության ձգտումներին:[2] Նշվածին եթե ավելացնենք այն, որ դեռևս ապրիլին Ս. Լավրովը պատերազմի կոչ էր որակել Անկարայից հնչող տեսակետները: Թուրք-ռուսական մոտեցումներում հակակշռման համարժեք արտահայտությունները հետևյալն էին. Մոսկվան սկզբնապես բացահայտորեն չէր մեղադրում Անկարային Լեռնային Ղարաբաղում կոնֆլիկտի էսկալացիայի հարցում, գրեթե համաժամանակ Էրդողանը հանդես գալով ներքին սպառման հարթակներում, հայտարարում է, որ Ռուսաստանը Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի կողմ է համարվում[3]: Դրան հետևեց Մեդվեդևի մեկնաբանությունը ասվածի հետ կապված. Ռուսաստանը որպես հակամարտության կողմ համարվեց Լեռնային Ղարաբաղում: Թուրքիան ձգտել է " կրակի վրա յուղ լցնել", կարծում էր ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը՝ "Россия-1" հեռուստաընկերությանը "Вести в субботу" հաղորդման ժամանակ, նշելով. "Դուք նշել եք թուրքական գործոնի մասին: Հավանաբար, այս թուրքական գործոնը կա, թեկուզ և այն պատճառով, որ Թուրքիան արտահայտել է իր դիրքորոշումը"[4]:

Մասնավորապես ապրիլի 13-ին կայացել էր Իլհամ Ալիև և Ռեջեփ Թայիբ Էրդողան քննարկումը, և իսլամական համագործակցություն ստեղծելու համայնապատկերի վրա նախագահները քննարկել էին Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակը[5]: Հատկանշական է, որ թուրքական կողմի տեսակետը հետևյալն էր. Լեռնային Ղարաբաղի խնդիրը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով Ադրբեջանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության շրջանակում: Այս մասին հայտարարել էր նաև Մևլութ Չավուշօղլուն Պեկինում՝ Ասիայում վստահության միջոցների և համագործակցության խորհրդաժողովի ժամանակ[6]:

Ի հակադրություն վերոնշյալի՝ ռուս-թուրքական ակնհայտ «քաղաքական լեզվակռիվը» որոշակի փոփոխությունների է ենթարկվում Ռեջեփ Թայիբ Էրդողանի՝ Ադրբեջան կատարած այցի ընթացքում՝ ՄԱԿ-ի քաղաքակրթությունների դաշինքի 7-րդ Գլոբալ ֆորումի ժամանակ, Թուրքիայի նախագահը զերծ մնաց պաշտոնական մակարդակով հայտարարություններ անելու Լեռնային Ղարաբաղի մասին: Հատկանշական է, որ հակամարտության սրման առաջին օրերին ադրբեջանական կողմին համերաշխություն հայտնած թուրքական կողմը՝ որևէ կերպ չանդրադարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ ստեղծված իրավիճակին[7]: Պետք է փաստել, որ սա ռուս-թուրքական սրված հարաբերություններում թուրքական կողմի՝ առճակատումից խուսափելու դրսևորում էր, միաժամանակ նաև ուղերձ Ադրբեջանին, որ ոչ միշտ կարող են թուրք-ադրբեջանական արտաքին քաղաքական առաջնահերթությունները և շահերը համընկնել: Ավելին, դիվանագիտական զարգացումներում նախատեսվում էր 2016 թ. հուլիսի 18-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ժամանումը Անկարա, որը թուրքական կողմի համար հակամարտության մեջ գործուն ներգրավվածություն ապահովելու քայլ կարող էր հանդիսանալ, ինչպես նաև Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու խաղաքարտ[8]: Թուրքիայի համանախագահության ձգտումները, սակայն, չեն կարող իրականություն դառնալ այն պարզ պատճառով, որ հակամարտող կողմերը՝ ՀՀ և ԼՂՀ-ն իրենց, համաձայնությունը չէին տա:

Հակամարտության սրման քննարկվող փուլում թուրքական հակակշիռ արտաքին քաղաքականության դրսևորումները պետք է դիտարկել հետևյալ տեսանկյուններից.

- որպես Ռ.Էրդողանի ձախողված բազմավեկտոր արտաքին քաղաքականության աշխուժացման պատկեր ստեղծելու միջոց,
- թուրքական կողմից սիրիական ճգնաժամի նկատմամբ բևեռացված քաղաքականությանը հակադիր՝ հարավկովկասյան իրողություններին խառնվելու միջոց, ինչպես նաև սիրիական ճգնաժամում թուրքական բացասական դերակատարությունից միջազգային հանրության ուշադրության տարաբևեռման փորձ,
- Ադրբեջանի նկատմամբ Ռուսաստանի հնարավոր ազդեցության հակակշռում,

[1]Մարտիրոսյան Ռ., «Թուրքիայում քառօրյա պատերազմը դիտարկվում է որպես Ադրբեջանի հաղթանակ». Ռուբեն Սաֆրաստյան, Ապրիլ 26 2016, (http://168.am/2016/04/26/629208.html)

[2] Նույն տեղում

[3]СтаниславТарасов,Карабахская война не позволила Турции укрепиться в Закавказье, 8 апреля 2016, (https://regnum.ru/news/polit/2114690.html)

[4] Медведев прокомментировал слова Эрдогана об участии РФ в конфликте в Карабахе, 9 апреля, 2016. (http://www.interfax.ru/world/502877)

[5] Ալիևը և Էրդողանը քննարկել են ԼՂ հարցը, Ապրիլ 14, 2016, (http://168.am/2016/04/14/623444.html)

[6]Թուրքիան Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ լուծման հույս ունի, Ապրիլ 28, 2016, (http://168.am/2016/04/28/629936.html)

[7]«Բաքու կատարած այցի ժամանակ Էրդողանը չհիշեց Ղարաբաղի մասին». ռուսական մամուլն անդրադարձել է Թուրքիայի նախագահի այցին, Ապրիլ 27, 2016, (http://168.am/2016/04/27/629654.html)

[8] Крылов: Турция разыгрывает карту Карабаха, чтобы показать — кризис с Россией преодолен 18 июля, 2016 (https://eadaily.com/ru/news/2016/07/18/krylov-turciya-razygryvaet-kartu-karabaha-chtoby-pokazat-krizis-s-rossiey-preodolen)Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձի պատճառով այցը չկայացավ:

- հակամարտության պատմական ակունքներից սկսած Թուրքիայի կողմից քննարկվող խնդրում / նաև տարածաշրջանում/ կարևոր դերակատար լինելու շարունակվող ձգտում՝ անգամ ներքին և արտաքին ռեսուրսների անբավարարության պայմաններում[1]:

Հատկանշական է, որ ապրիլյան և հետապրիլյան դիվանագիտական գործելակերպում ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրման առնչությամբ ռուս-թուրքական հակակշռման դրսևորումների գործելաոճն ու դիվանագիտական լեզուն բևեռացված էր:

Ռուս-գերմանական և գերմանա-թուրքական հակակշռումների եռակողմ դրսևորումներ:Հակամարտության սրման նոր փուլում հիմնախնդրի նկատմամբ գնահատականով հանդես եկավ ԳԴՀ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարտին Շեֆերը, որը կոչ արեց կողմերին զերծ մնալ նոր լարվածություն հրահրելուց : Հայտարարության մեջ նշվում էր, որ Գերմանիան, հանդես գալով որպես ԵԱՀԿ-ի նախագահ, մեծագույն տագնապով է ընդունում հակամարտության կողմերի շփման գծում ռազմական լարումը[2]: Իր հերթին ռուսական կողմը անարձագանք չթողեց Գերմանիայի այս դիրքորոշումը. Ս. Լավրովի հարցազրույցներից մեկում շեշտվում էր այն հանգամանքը, որ գերմանական կողմի ակտիվության ձգտումները հակամարտության կարգավորման մեջ ներգրավվելու համար հավանության է արժանանում ռուսական կողմից[3]: Ս. Լավրովի այս շեշտադրումների ենթատեքստում պետք է հասկանալ թուրք-գերմանական և թուրք-ռուսական հարաբերությունների վատթարացման ֆոնին որպես Թուրքիային հակադարձող քայլ: Հակամարտության դիտարկվող փուլում գերմանական կողմից խնդրի նկատմամբ հետաքրքրվածությունը բացատրվում է որոշ հանգամանքներով.

- ապահովում է նրա ներգրավվածությունը և ասելիք ունենալու հնարավորությունը հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումներում,
- ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ապրիլյան սրման նոր փուլում գերմանական կողմի հայտարարությունները գերմանա-թուրքական լարված հարաբերություններում հակադարձման դրսևորումներ էին:

Հատկանշական է, որ քննության առարկան՝ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության սրման նոր փուլը, չգաղտնազերծված դիվանագիտության հարթակում է: Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության քաղաքական զարգացումների քննարկվող ժամանակաշրջանն ամփոփվել է հակամարտությամբ հետաքրքրված պետությունների կողմից դեկլարատիվ հայտարարություններով և որոշ դեպքերում նոր գործընթաց մեկնարկելու պատրանքային գործելակերպով՝ նպատակ ունենալով անմասն չմնալ տարածաշրջանային քաղաքական գործընթացներից:

[1] Турция продолжит свою политику давления в отношении Армении, пытаясь добиться уступок в Карабахском вопросе, 03.08.2016 (http://eurasnews.ru/armeniya/%D1%82%D1%83%D1%80%D1%86%D0%B8%D1%8F-%D0%BF%D1%80%D0%BE%D0%B4%D0%BE%D0%BB%D0%B6%D0%B8%D1%82-%D1%81%D0%B2%D0%BE%D1%8E-%D0%BF%D0%BE%D0%BB%D0%B8%D1%82%D0%B8%D0%BA%D1%83-%D0%B4%D0%B0%D0%B2%D0%BB%D0%B5/)

[2] Берлин озабочен признаками новой эскалации насилия в Нагорном Карабахе, 06.05.2016 (https://ria.ru/world/20160506/1427769951.html)

[3] Интервью Министра иностранных дел России С.В.Лаврова МИА «Россия сегодня», Москва, 4 мая 2016 года (/http://www.mid.ru/web/guest/meropriyatiya_s_uchastiem_ministra/-/asset_publisher/xK1BhB2bUjd3/content/id/2267661)